



ԳԼՈԲՈՒՍ



*Հրատարակում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ*

5 (84)

ԵՐԵՎԱՆ

2017

ԳԼՈՒԲՈՒՍ

Թիվ 5 (84), 2017

«ԳԼՈՒԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների
ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և
Ռուս-հայկական (սլավոնական)
համալսարանի կառավարման ամբիոնների
դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ. Դանիելյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին
դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ. Կարապետյան

ՀՀ վարչապետ, տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան

ՀՀ Կ փոխնախագահ

Մամվել Մանուկյան

IPSC Քաղաքական և սոցիոլոգիական
խորհրդատվությունների ինստիտուտի
վերլուծաբան, ս.գ.թ.

Վահագն Ագյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական,
ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի Հանրային կառավարման
ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
նախագահ, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր

Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի

տեղակալ

Վահագն Ագյան

Պատասխանատու խմբագիր

Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու

քարտուղար

Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ

Արեստակես Միմավորյան

Դիանա Գալստյան

Կարեն Վերանյան

Վահրամ Հովյան

Էջադրող-ձևավորող

Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈՒԲՈՒՄ

Թիվ 5 (84), 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարեն Վերանյան

Պետության «Հավաքական ազգային հզորությունը» 5

Վահրամ Հովյան

Միյությունում հայ-հունական համագործակցության խնդիրները 12

Մհեր Սահակյան

«Մետաքսի ճանապարհի» ոլորաններում 22

Արա Մարջանյան

Տվյալները որպես բնական պաշար և հզորության աղբյուր 28

Նվարդ Մելքոնյան

Նյարդալեզվաբանական ծրագրավորումը 39

Գագիկ Տերտերով

«Օվերթոնի պատուհանը» 44

Հուշագիր հեղինակին 47

ՊԵՏՈՒԹՅԱՆ
«ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ»

*Կարեն Վերանյան**

Պետության ներուժի գնահատման մոտեցումները

Երկրորդ աշխարհամարտից հետո և հատկապես սառը պատերազմյան ժամանակաշրջանի առաջին տասնամյակներից սկսած՝ առաջատար երկրների քաղաքական վերնախավերը սկսեցին զգալի ուշադրություն դարձնել իրենց երկրների և հասարակությունների մասնակի կամ հստակ ուղղվածության (տնտեսական, ռազմական և այլն) ռեսուրսների գնահատման ու այդ պոտենցիալի զարգացման հնարավորություններին: Առանձնակի հաջողություններ արձանագրեցին հատկապես արևմտյան երկրները, ինչպես նաև ասիական որոշ պետություններ (օրինակ՝ Ռուսաստանն ու Չինաստանը): Հետագոտական աշխատանքներին ակտիվորեն ներգրավված էին տեղի փորձագիտական հանրության ներկայացուցիչները, որոնք փորձագիտական գնահատականներ էին ներկայացնում և դրանց հիման վրա կանխատեսումներ անում տվյալ պետության և հասարակության հզորության չափորոշիչների սահմանման ու ռեսուրսների զարգացման հնարավորությունների վերաբերյալ:

Սկզբնական շրջանում թիրախային հետազոտություններ էին կատարվում մասնավորապես խաղաղ պայմաններում պետության մարդկային և մտավոր կարողությունների գնահատման ոլորտում: Մեծ ուշադրություն էր դարձվում այդ պոտենցիալի մոբիլիզացման (կուտակման) հնարավորություններին հատկապես նախապատերազմական և ճգնաժամային հնարավոր սցենարների պարագայում: Խնդիրն իսկապես ակտուալ էր այն առումով, որ մարդկությունը նոր էր վերապրել Երկրորդ աշխարհամարտը և գտնվում էր հնարավոր նոր ռազմական բախումների վերսկսման սպառնալիքների ներքո:

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար:

Ելնելով այդ ժամանակաշրջանի միջազգային ռազմաքաղաքական լարված իրադրությունից և սառըպատերազմյան զարգացումների ընդհանուր տրամաբանությունից՝ «պետության և հասարակության պոտենցիալի կամ հզորության գնահատման» մեթոդաբանական չափորոշման հետազոտություններում առաջնակարգ տեղ էր հատկացվում երկրի ռազմական ռեսուրսների մոբիլիզացման ու զարգացման հնարավորություններին: Այս ուղղությամբ լուրջ գիտահետազոտական ուսումնասիրություններ կատարվեցին մասնավորապես Միացյալ Նահանգներում ու Ռուսաստանում, որոնք գիտահետազոտական, ռազմատեխնիկական ասպարեզներում զգալի ներդրումներ էին իրականացնում միջուկային պոտենցիալի հզորացման նախագծերում:

Սառըպատերազմյան ժամանակաշրջանի վերջին տասնամյակներին և ընդհուպ մինչև ԽՍՀՄ փլուզումը աշխարհի առաջատար երկրներում, այդ թվում և Եվրոպայում, վերանայվեցին «պետության և հասարակության մասնակի (թիրախային) հզորության կամ պոտենցիալի» գնահատման գերակայությունները, սկսեցին մեծ ուշադրություն դարձնել «պետության բազմակողմանի» կամ, ինչպես ընդունված է ասել մասնագիտական գրականությունում, «պետության հավաքական հզորության» կամ «հավաքական ազգային հզորության» (այսուհետ՝ ՀԱՀ) գնահատման մեթոդաբանական մշակումներին:

Պետության ՀԱՀ գնահատման ամերիկյան և չինական մշակումները

Մասնագիտական գրականությունում ՀԱՀ-ը սահմանվում է որպես պետության և հասարակության գիտատեխնիկական, քաղաքական, տնտեսական, ռազմական, մշակութային պոտենցիալի միջինացված ցուցիչ, որը հնարավորություն է տալիս տվյալ պետությանը զարգանալ տարածաշրջանային, միջազգային մարտահրավերների ու սպառնալիքների ներքո, հաղթահարել ներքին և արտաքին քաղաքական-տնտեսական կատակլիզմները, առաջ մղել և տարածել ազգային արժեքներն ու հոգևոր ներուժը:

Պետության և հասարակության ռեսուրսների զարգացման հնարավորությունների հարցում փոխվեցին նաև քաղաքական ու փորձագիտական գնահատման նախկին մոտեցումները: Դա դրսևորվեց հատկապես արևմտյան առաջատար երկրներում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Գերմանիա), որտեղ «պետության հավաքական հզորություն» սահմանմամբ հատկապես վերջին տասնամյակում ամրագրվեց ներուժի գնահատման «փափուկ» չափորոշումը, որը տվյալ դեպքում ենթադրում էր ոչ այնքան երկրի պոտենցիալի ռազմական բաղադրիչը, որքան նրա մտավոր և մարդկային կարողությունների ներդրումն ի շահ հասարակության բարեկեցության ապահովման: Ի տարբերություն արևմտյան երկրների, այդ համատեքստում Ռուսաստանը միայն մասնակիորեն կարողացավ դուրս գալ սառըպատերազմյան ընդհանուր ռազմականացման մրցակցային տրամաբանությունից և մինչև օրս շարունակում է ուշադրություն դարձնել պետության հզորացման ռազմական բաղադրիչին:

ԱՄՆ-ում ՀԱՀ գնահատման առաջին հետազոտություններն իրականացվել են 1960-ականներին: 1963թ. քաղաքագիտության պրոֆեսոր Ջ. Դավիթ Սինգերն առաջարկեց «Ազգային հզորության վիճակագրական գնահատում» (*Composite Index of National Capability-CINC*) մոդելը: Գնահատման այս մեթոդաբանության հիմքում, սակայն, ընկած է միայն «կոշտ ուժի» հաշվարկը, որը հիմնվում է համաշխարհային ցուցիչների՝ ժողովրդագրական (օր.՝ քաղաքային-գյուղական բնակչության համամասնությունը), տնտեսական-էներգետիկ (օր.՝ երկրում էներգիայի սպառման ցուցանիշները, երկաթի ու պողպատի արտադրությունը) և ռազմական միջին տոկոսային ցուցանիշների վրա: Նշենք, որ այս մեթոդը շարունակում է համարվել ՀԱՀ գնահատման հիմնական ընդունված մեթոդներից մեկը նաև ներկայում:

Միացյալ Նահանգներում ՀԱՀ հետազոտական ռազմավարական մշակումներում զգալի է Ռեյ Քլայնի (*Ray C. Cline*) ավանդը, որը հանդիսանում է համաշխարհային տերությունների ազգային հզորության գնահատման հիմնական մեթոդներից մեկի հիմնադիրը¹: Նա այս ոլորտում

¹ http://www.situation.ru/app/j_art_1155.htm

հրատարակած իր առաջին գրքում («Համաշխարհային տերությունների հզորության գնահատումը. ռազմավարական առաջընթացի հաշվարկը», *World power assesement. A calculus of strategic drift*) կատարել է տարբեր երկրների հավաքական ազգային հզորությունների սահմանման մաթեմատիկական-մեթոդաբանական հաշվարկները: Ընդ որում, նրա մեթոդաբանական մոտեցումներում հաշվարկվում էին հիմնականում պետության հավաքական հզորության ոչ ռազմական հնարավորությունները:

Նշենք, սակայն, որ մինչև 2000-ականները Միացյալ Նահանգներում թեև լայն տարածում ստացան «պետության հավաքական հզորության» փորձագիտական գնահատման մեթոդաբանական մոտեցումները, այնուհանդերձ, դրանք հիմնականում ունեին բավական ստանդարտացված չափորոշիչներ: Այսպես, որպես «պետության հավաքական հզորության» գնահատման չափորոշիչներ առանձնացվում էին երկրի ՀՆԱ, ռազմական ծախսերի և զինված ուժերի թվաքանակի, բնակչության թվաքանակի և այլ ցուցանիշներ:

ՀԱՀ մեթոդաբանական-փորձագիտական գնահատումների տեսանկյունից արժեքավոր է նաև ամերիկյան հեղինակավոր «Ռենդ» կորպորացիայի 2005թ. հրատարակած «Չափելով ազգային հզորությունը» (*Measuring National Power*) գեկույց-հետազոտությունը: Այդ ուսումնասիրության փորձագետների գնահատականով, պետության հզորությունը (*State power*) կարող է սահմանվել 3 մակարդակով՝

1. պետության ռեսուրսները (կարողությունները) կամ ընթացիկ հզորությունը,
2. ինչպե՞ս է այդ հզորությունն արտացոլվում ազգային գործընթացներում (*National processes*),
3. պետության հզորությունը վերջնահաշվարկում կամ ո՞ր պետությունն է գերիշխում տվյալ հանգամանքներում:

«Ռենդ»-ի մեթոդաբանական մշակումներում առաջարկվում է ՀԱՀ-ը գնահատել երկու հիմնական ուղղությամբ՝ «կոշտ» և «փափուկ» ուժի մեթոդաբանության կիրառմամբ: ՀԱՀ գնահատման մեթոդաբանական հաշվարկներում շեշտվում է նաև այսպես կոչված «ոչ պետական գործոնների

կամ դերակատարների» (*Non-state actors-NSAs*) ընդգրկման անհրաժեշտությունը, ինչպես, օրինակ, ահաբեկչության, «ուղեղային կենտրոնների» և խոշոր մասնավոր կորպորացիաների ազդեցությունը համաշխարհային գործընթացների վրա:

ՀԱՀ գնահատման ուղղությամբ ակտիվ հետազոտական մշակումներ իրականացվեցին Չինաստանում 20-րդ դարի 80-90-ականներին: Այդ մեթոդաբանական հաշվարկների համաձայն, 1989թ. դրությամբ Չինաստանը ՀԱՀ ցուցով զբաղեցնում էր աշխարհում 6-րդ հորիզոնականը՝ 222 ամփոփ միավորով՝ զիջելով ԱՄՆ-ին (593 միավոր) և ԽՍՀՄ-ին (386 միավոր):

Վերջին շրջանում Չինաստանում «պետության հավաքական հզորության» գնահատման հաշվարկներում աստիճանաբար մեծ տեղ է հատկացվում ՀԱՀ «փափուկ ուժի» գնահատման մեթոդաբանության մշակման կիրառմանը: Ներմուծվեցին նոր հասկացություններ, ինչպես, օրինակ, «պետության հոգևոր հզորություն», «պետության մշակութային-արժեքաբանական և քաղաքակրթական ներուժ»: Չինաստանի ղեկավարությունը մեծ ուշադրություն է դարձնում միջազգային հարթությունում իր քաղաքակրթական, մշակութային-արժեքաբանական ներուժի «արտահանման» և ազդեցության տարածման հարցերին:

Համաձայն պետության հզորության հարցի վերաբերյալ չինական որոշ մեթոդաբանական գնահատումների, ներկայում չինական դիվանագիտությունն ընկալվում է որպես «պետության հավաքական հզորության» և առհասարակ երկրի զարգացման կարևոր նախադրյալներից մեկը, որը համեմատվում է, օրինակ, Ռուսաստանի միջուկային պոտենցիալի հետ: Միաժամանակ շեշտվում է, որ չինական դիվանագիտության արդյունավետ մեխանիզմների և ռազմավարության շնորհիվ հնարավոր է ներազդել միջազգային հարաբերությունների և միտումների վրա, ինչը նույնպես, որպես ցուցիչ, խոսում է տվյալ պետության «հավաքական ազգային հզորության» բարձր ցուցանիշների մասին: Այստեղ կարևոր ցուցիչներ են արտաքին շուկայում տվյալ պետության ներդրումների ծավալները, ինչպես նաև արտաքին տնտեսական քաղաքականությունում երկրի մասնակցությունն ու ներգրավվածության մասնաբաժինը:

Կարևոր հարցերից մեկը վերաբերում է այս կամ այն քաղաքական-տնտեսական դաշինքին տվյալ պետության մասնակցության հարցին՝ որպես երկրի ՀԱՀ բնութագրիչ: Միջազգային հարաբերությունների և քաղաքական գործընթացների վրա հնարավոր ազդեցության հարցը ենթադրում է նաև գնահատման մեթոդաբանական-փորձագիտական հստակ մեխանիզմների մշակում, ինչը թույլ կտա պարզել՝ որքանով է այս կամ այն ռազմաքաղաքական, տնտեսական ինտեգրացիոն կազմակերպությունում կամ դաշինքում տվյալ երկրի ներկայացվածությունն ազդում այդ պետության ՀԱՀ ցուցչի վրա:

Բավական արժեքավոր էին 2013թ. տարվա ամփոփ տեղեկատվության մշակման արդյունքների հիման վրա չինացի հայտնի տնտեսագետ Խու Անգանի՝ ԱՄՆ և Չինաստանի ՀԱՀ համեմատական վերլուծության տվյալները: Նշենք, որ այդ վիճակագրությունը հիմնվում էր գնահատման «կոշտ ուժի», ստանդարտ ցուցիչների հաշվարկի մեթոդաբանության վրա: Ըստ Խու Անգանի մեթոդաբանական հաշվարկի, 2013թ. ՀԱՀ ընդհանուր ցուցչով Չինաստանն առաջ էր անցել Միացյալ Նահանգներից: 2014թ. դրությամբ, ըստ այդ գնահատականների, Չինաստանն արձանագրել էր համաշխարհային հավաքական հզորության ցուցչի 17.13%, Միացյալ Նահանգները՝ համապատասխանաբար 15,25%²: Նշենք նաև, որ տարբեր հաշվարկներով, լիակատար մոբիլիզացման պայմաններում պետության ՀԱՀ-ը գնահատվում է տվյալ երկրի ՀՆԱ 45-50%-ի չափով (կորեական պատերազմի շրջանում ԱՄՆ-ը մոբիլիզացրեց ՀՆԱ 13%-ը)³:

Ամփոփում.

հետևություններ Հայաստանի համար

Պետության «հավաքական ազգային հզորության» գնահատման հիմնահարցն ակտուալ է առաջին հերթին ռազմական սպառնալիքներ ունեցող երկրների համար, ինչպիսին է Հայաստանը: Հաշվի առնելով այն իրողությունը, որ Ադրբեյջանի ղեկավարությունն աստիճանաբար մեծացնում է ազրեսիվ քաղաքականությունը Հայաստանի և Արցախի նկատմամբ՝ հա-

² <http://globalaffairs.ru/number/Bolshie-gonki-18150>

³ <http://mybiblioteka.su/tom2/1-44554.html>

յաստանյան փորձագիտական շրջանակներում ՀԱՀ գնահատման ուղղությամբ մշակումների իրագործման անհրաժեշտությունն իսկապես հրատապ է: Այսօր դժվար է ասել՝ արդյո՞ք Հայաստանում իրականացվել են Հայաստանի և Ադրբեջանի հավաքական հզորության գնահատման համեմատական հետազոտություններ: Ավելին, ինչպես արդեն նշվեց, ներկայում ակտիվ աշխատանքներ են տարվում ՀԱՀ գնահատման «փափուկ ուժի» և դրա հոգևոր-քաղաքակրթական բաղադրիչի մշակումների համատեքստում: Եվ այս առումով չափազանց արժեքավոր կլինեն համեմատական հիմնարար հետազոտություն իրականացնել, որը հնարավորություն կտար բացահայտել Հայաստանի (հայության) և Ադրբեջանի հոգևոր-արժեքաբանական հզորությունը կամ պոտենցիալը:

Կարելի է համաձայնել, որ երկու երկրների ռեսուրսների կամ պոտենցիալի ուսումնասիրման աշխատանքներ, թերևս, կան, սակայն դրանք կրում են մասնակի բնույթ, ինչպես, օրինակ, Հայաստանի և Ադրբեջանի ռազմական պոտենցիալի հետազոտությունները և այլն: Կարևոր է նաև պարզել՝ արդյո՞ք նման հետազոտություններ իրականացվում են Ադրբեջանում:

Հայաստանում ՀԱՀ գնահատման հետազոտությունների իրագործումը հնարավորություն կտա պարզել ոչ միայն Հայաստանի հավաքական ազգային ներուժն ու ոլորտի բացթողումները, այլ նաև այդ ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակել և առաջարկել Հայաստանի զարգացման սցենարներ:

ՄՓՅՈՒՌՔՈՒՄ ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վահրամ Հովյան՝

Էթնիկ լոբբիզմն աստիճանաբար ավելի մեծ դեր է ստանձնում արդի աշխարհում: Պետություններն իրենց արտաքին քաղաքականությունն իրականացնելիս հենվում են արտերկրի, մասնավորապես՝ գերտերությունների իրենց համայնքների վրա: Եվ դաշնակից համարվող ժողովուրդները համագործակցում են ոչ միայն պետությունների, այլև սփյուռքի մակարդակով:

Ադրբեջանի և Թուրքիայի սփյուռքյան համագործակցության պտուղները հայությունը (Հայաստան, Սփյուռք) արդեն զգացել է գործնականում¹: Դրան ի հակակշիռ, հայկական սփյուռքն էլ ունի իր դաշնակիցները: Որպես այդպիսիք հիմնականում հանդես են գալիս արտերկրի հունական, ասորական, քրդական և եզդիական համայնքները²:

Սակայն, եթե թուրք-ադրբեջանական լոբբիզմն ունի հարուստ ավանդույթներ և մեծ ճանաչում, ապա հայկական սփյուռքի համագործակցությունն իր դաշնակիցների հետ մինչ այժմ ունեցել է դիպլոմատիկ բնույթ (երբեմն համագործակցություն եղել է այս կամ այն ընդհանուր խնդրի շուրջ): Եվ այդպիսի համագործակցության կարևորությունը միայն վերջերս է սկսել լրջորեն գիտակցվել ինչպես հայերի, այնպես էլ նրանց դաշնակից ժողովուրդների կողմից:

2017թ. մարտի 10-ին ՀՀ և Հունաստանի արտաքին գործերի նախարարներ Էդ.Նալբանդյանը և Նիկոս Կոճիասը համատեղ մամուլի ասուլիսում շոշափեցին նաև սփյուռքում հայ-հունական համագործակցության

¹ «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ, Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար:

¹ Որոշակիորեն սփյուռքում ադրբեջանական և թուրքական լոբբիների դաշնակից է համարվում նաև հրեական լոբբին:

² Ավելի ակտիվ աշխատանքի դեպքում հայկական սփյուռքի դաշնակիցների թիվը կարելի է ընդլայնել՝ ընդգրկելով նաև արաբական, ռուսական և իրանական համայնքները:

հարցը³: Ավելին, Հունաստանի ԱԳ նախարարը նշեց, որ մոտ ապագայում նախատեսվում է հունական և կիպրական պատվիրակությունների⁴ այց Երևան՝ քննարկելու արտերկրում երկու ժողովուրդների համագործակցության հնարավորությունների հարցը: Նախարարները որոշակիորեն ուրվագծեցին նաև այն ոլորտներն ու ընդհանուր խնդիրները, որոնց շուրջ նախատեսվում է համագործակցությունը՝ քաղաքականություն (ցեղասպանությունների միջազգային դատապարտում և կանխարգելում), տնտեսություն (արտաքին ներդրումների ներգրավում երկու երկրների տնտեսության մեջ), մշակույթ⁵:

ՀՀ և Հունաստանի արտգործնախարարների վերոհիշյալ հայտարարություններն առիթ են սփյուռքում հայ-հունական համագործակցության մինչ այժմ եղած փորձն արժևորելու և համագործակցության հետագա ընդլայնման ու խորացման առնչությամբ որոշակի առաջարկություններով հանդես գալու համար:

Դիտարկելով մինչ այժմ առկա փորձը՝ կարող ենք առանձնացնել սփյուռքում հայ-հունական համագործակցության երեք մոդել՝ անհամաչափ (ասիմետրիկ), համաչափ (սիմետրիկ) և համադրական, որոնք ունեն դրսևորման իրենց ձևերը:

Անհամաչափ (ասիմետրիկ) մոդել

Սա համագործակցության այնպիսի ձև է, երբ այն տեղի է ունենում մի կողմից կառույցի (կազմակերպության), իսկ մյուս կողմից՝ անհատի միջև: Սույն մոդելը կիրառվել է, օրինակ, Կանադայում, երբ այդ երկրի Հայ դատի հանձնախումբը համագործակցել է ազգությամբ հույն քաղաքական գործչի՝ Կանադայի խորհրդարանի նախկին պատգամավոր, ներկայում՝ Տորոնտոյի քաղաքային խորհրդի անդամ Ջեյմս Կարիզիանիսի հետ: Համագործակցությունն ունեցել է հետևյալ դրսևորումները:

³ Տե՛ս ՀՀ և Հունաստանի ԱԳ նախարարներ Էդվարդ Նալբանդյանի և Նիկոս Կոճիասի համատեղ մամուլի ասուլիսի տեսագրությունը, http://www.mfa.am/hy/press-conference/item/2017/03/10/min_gr_pc/

⁴ Ըստ Ն.Կոճիասի՝ հունական պատվիրակությունը գլխավորելու է ԱԳ փոխնախարարը:

⁵ Նախարար Ն.Կոճիասը որպես համագործակցության ոլորտ հիշատակեց նաև պատմությունը: Կարծում ենք, դրանով նկատի է ունեցվել ցեղասպանությունների միջազգային դատապարտումը, որին կարելի է ավելացնել նաև բյուզանդական ժառանգության վերախմաստավորումը:

Ջեյմս Կարիգիանիսը Հայ դատի հանձնախմբի ջանքերով ժամանել է Արցախ՝ ընտրություններում որպես դիտորդ մասնակցելու համար: Քանի որ Արցախը ճանաչված պետություն չէ, ապա միջազգային կազմակերպություններն ընտրությունների ժամանակ պաշտոնական դիտորդական պատվիրակություններ չեն ուղարկում այնտեղ՝ դրանով իսկ չճանաչելով այդ ընտրությունները (կամ դրանց օրինակարգությունը): Այս իրավիճակին որոշակիորեն կարող է հակակշռել ոչ պաշտոնական դիտորդական առաքելությունների այցն Արցախ՝ ընտրությունները դիտարկելու նպատակով, ինչը, թեև ոչ պաշտոնական մակարդակով, բայց գոնե հասարակական ընկալումներում (խոսքն առաջին հերթին միջազգային հասարակայնության մասին է) օրինակարգություն է հաղորդում այդ ընտրություններին և դրանց արդյունքում ձևավորված Արցախի իշխանություններին: Այդ դիտորդական առաքելությունների ձևավորման և Արցախի այցելության գործը կազմակերպում է Հայ դատի հանձնախումբը: Իսկ այդ գործում կարևոր նշանակություն ունի նաև բարեկամ ժողովուրդների սփյուռքի ներկայացուցիչների հետ համագործակցությունը, որոնք, զբաղեցնելով տարբեր պաշտոններ այս կամ այն երկրում, նույնպես կարող են ընդգրկվել Արցախի ընտրություններում դիտորդական առաքելություն իրականացնող պատվիրակություններում:

Ջեյմս Կարիգիանիսն արդեն երկու անգամ որպես դիտորդ մասնակցել է արցախյան ընտրություններին՝ ներկայացնելով Կանադայի կառավարությունը⁶: Առաջինը՝ 2012թ. նախագահական ընտրությունների և երկրորդը՝ 2017թ. փետրվարի 20-ի սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի ժամանակ⁷:

Արցախի հարցին ի նպաստ Կանադայի Հայ դատի հանձնախմբի համագործակցությունն ազգությամբ հույն գործչի հետ առաջիկայում կարող է ստանալ նաև այլ դրսևորումներ և ունենալ այլ արդյունքներ, ինչպիսիք են՝ ա) Արցախի հետ բարեկամության պատգամավորական խմբի ստեղծումը, բ) Ստեփանակերտի հետ Կանադայի քաղաքներից մեկի

⁶ Տորոնտոյի քաղաքային խորհրդի անդամ Ջեյմս Կարիգիանիսն այցելեց Սփյուռքի նախարարություն, <http://hayernaysor.am/archives/234333>

⁷ «Ես Ադրբեջանի «սև ցուցակ»-ում եմ և չեմ մտածում այդ մասին». Ջեյմս Կարիգիանիս, <http://hayernaysor.am/archives/234817>

(ամենայն հավանականությամբ՝ Տորոնտոյի) քույրացումը: Այս գործընթացի շրջանակներում նախատեսվում է Տորոնտոյի քաղաքային խորհրդի պատվիրակության այցը Հայաստան՝ քույրացման պայմանագիրը կնքելու նպատակով⁸: Ստեփանակերտը և Տորոնտոն քույր քաղաքներ հռչակելը կարող է ոչ միայն լուրջ նպաստ բերել Ստեփանակերտի զարգացմանը, այլև նպաստել Արցախի միջազգային ճանաչմանը՝ դառնալով այդ գործընթացի բաղադրիչներից կամ բազմաթիվ օղակներից մեկը:

Ջեյմս Կարիգիանիսի կողմից արցախյան խնդրին ի նպաստ քայլ էր նաև ապրիլյան քառօրյա պատերազմի վերաբերյալ նրա հայտարարությունը, որում նշվում էր, որ «Արցախում պատերազմը Ադրբեջանի կողմից է սկսվել»⁹:

Ազգությամբ հույն գործիչը զգալի ավանդ է ունեցել նաև Կանադայում Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում, ինչի համար 2014թ. ՀՀ-ում արժանացել է «Մխիթար Գոշ», իսկ Արցախում՝ «Ոսկե» մեդալների¹⁰:

Անհամաչափ համագործակցության մեկ այլ դրսևորում էլ առկա է ԱՄՆ-ում՝ գիտակրթական ոլորտում: Այս ասպարեզում նշանակալի համագործակցություն է ծավալվել «Թավիթյան» հայկական հիմնադրամի և Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցի միջև, որի դեկանն ազգությամբ հույն ադմիրալ Ջեյմս Ստավրիդիսն է: Հիմնադրամի հովանավորությամբ արդեն մոտ 300 հայ պետական ծառայողներ վերապատրաստման դասընթացներ են անցել դպրոցում: 2017թ. մայիսին «Թավիթյան» հիմնադրամի պատվիրակությունը՝ հիմնադիր նախագահ, գործարար և բարերար Ասո Թավիթյանի և Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցի դեկան Ջեյմս Ստավրիդիսի գլխավորությամբ այցելել են Հայաստան և հանդիպում ունեցել ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի հետ՝ քննարկելու համագործակցության ընդլայնման հնարավորությունները¹¹:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Տորոնտոյի քաղաքային խորհրդի անդամ Ջեյմս Կարիգիանիսն այցելեց Սփյուռքի նախարարություն, <http://hayernaysor.am/archives/234333>

¹¹ Տե՛ս ՀՀ վարչապետ. «Շահագրգռված ենք, որպեսզի «Թավիթյան» հիմնադրամն ընդլայնի իր գործունեությունը», <http://www.gov.am/am/news/item/12966/#>

Համաչափ (սիմետրիկ) մոդել

Այս մոդելի դեպքում համագործակցությունն ընթանում է կազմակերպությունների կամ անհատների միջև: Այդպիսի համագործակցության դրսևորման ձևեր են.

- Համատեղ մասնակցություն զանգվածային միջոցառումներին, որոնք շոշափում են ընդհանուր շահեր և մտահոգություններ: Այդպիսիք են, օրինակ, Հայոց ցեղասպանության զոհերի ոգեկոչմանը նվիրված միջոցառումները, որոնք կազմակերպվում են Սփյուռքի հայ համայնքներում ամեն տարի ապրիլ ամսին¹²: Այդ միջոցառումներին, բացի հայկական սփյուռքի ներկայացուցիչներից, մասնակցում են նաև տվյալ երկրում այն ժողովուրդների համայնքների ներկայացուցիչները, որոնք նույնպես ցեղասպանության են ենթարկվել Թուրքիայում և որոնք այսօր նույնպես շարունակում են հալածանքների (մարդկային իրավունքների ոտնահարումներ, բռնաճնշումներ և այլն) ենթարկվել այդ երկրում: Հունական սփյուռքն այս տեսակետից բացառություն չէ: Օրինակ, 2017թ. ապրիլի 24-ին Լոս Անջելեսում Հայոց ցեղասպանության զոհերի ոգեկոչման շրջանակներում կազմակերպված Արդարության «Քայլարշալի մասնակիցներում միջեւ կային նաեւ ասորի, քիւրտ, հրեայ, յոյն (ընդգծումը՝ հեղ.Վ.Հ.), եգիպտի եւ մարդկային իրաւանց աւելի քան երեսուն կազմակերպութիւններու ներկայացուցիչներ», - հղում կատարելով Լոս Անջելեսի «Ասպարեզ» օրաթերթին՝ գրում է «Նոր Մարմարան»¹³: Զանգվածային միջոցառումներին տարբեր ազգային համայնքների համատեղ մասնակցությունը կարևոր նշանակություն ունի այս կան այն խնդրի (տվյալ պարագայում՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման հարցի) միջազգայնացման և հասարակական գիտակցության մեջ որպես տվյալ երկրի (այս դեպքում՝ ԱՄՆ-ի) խնդիր (նաև նրա պատմության մաս) ընկալման տեսանկյունից:

¹² Թեև Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի հարգման օրը պաշտոնապես ապրիլի 24-ն է, սակայն ոգեկոչման միջոցառումները Սփյուռքում չեն սահմանափակվում միայն այդ օրով: Դրանք ընդգրկում են ավելի լայն ժամանակահատված:

¹³ Տասնեակ հազարաւոր հայեր ու զօրակիցներ Լոս Անճէլըսի մէջ մասնակցեցան Արդարութեան քայլարշալին, Նոր Մարմարա, 26.04.2017:

- *Ընտրություններում աջակցություն հայամետ և հունամետ թեկնածուներին:* Թերևս, այդպիսի համագործակցության արդյունք էր 2016թ. ապրիլին ԱՄՆ Սենատի նախնական ընտրություններում հայկական և հունական շահերի եռանդուն պաշտպան Քրիս Վան Հոլենի հաղթանակը թուրքամետ գործիչ Դոնա Էդվարդսի նկատմամբ¹⁴, չնայած վերջինիս ընտրաբաշավի համար ծախսված հսկայական միջոցներին¹⁵:
- *Աջակցություն միսյանց օրենսդրական նախաձեռնություններին:* Այսպիսի համագործակցության օրինակ է 2017թ. հունիսին հայ համայնքի նախաձեռնությամբ ԱՄՆ Կալիֆորնիայի նահանգի խորհրդարանի կողմից Թուրքիայում տնտեսական ներդրումներն արգելող օրենսդրական ակտի ընդունմանը¹⁶ տեղի հունական և ասորական կազմակերպությունների աջակցությունը:

Համաչափ մոդելով համագործակցության ինստիտուցիոնալացման ուղղությամբ կարևոր քայլ էր վերջերս ԱՄՆ հայկական և հունական համայնքների միջև փոխըմբռնման հուշագրի ստորագրումը:

Համադրական մոդել

Համագործակցության սույն մոդելի մեջ զուգորդվում են վերոհիշյալ երկու մոդելները: Այն դրսևորվում է հիմնականում տեղեկատվական-քարոզչական բնագավառում:

Համադրական մոդելի հետաքրքիր դրսևորումներից մեկն առնչվում է բրիտանաբնակ հույն (կիպրացի) գրող տիկին Իվ Մաքիսի՝ Հայոց ցեղասպանության թեմային նվիրված անգլերեն «The Slice Box Letter» գրքին: Վերջինս նվիրված է Հայոց ցեղասպանությանը, ինչպես նաև այն վերապրողների կյանքին: Հընթացս ներկայացվում են նաև հայկական մշակույթը, կենցաղը և խոհանոցը: Այսպիսով, գրքի նշանակությունը մի կողմից

¹⁴ Turkish Caucus Member Donna Edwards Defeated in Senate Primary, http://www.aaainc.org/index.php?id=7&no_cache=1&newsID=634&utm_source=Copy+of+AAA%3A+2016+Elect+ion&utm_campaign=AAA%3A+British+Foreign+Secretary&utm_medium=email

¹⁵ Sté u Soylu R., Turkish Lobby in US Hits Record High in Campaign Donations, <https://www.dailysabah.com/columns/ragip-soylu/2015/12/24/turkish-lobby-in-us-hits-record-high-in-campaign-donations>

¹⁶ Sté u Գալիֆորնիոյ նահանգային խորհրդարանը վաւերացուց Թուրքիոյ մէջ նահանգին ներդրումները ետ քաշելու նախագիծը, Նոր Մարմարա, 07.06.2017:

օտարներին Հայոց ցեղասպանության մասին իրազեկումն է (գիրքն արդեն թարգմանվել է չորս լեզուներով), իսկ մյուս կողմից՝ հայկական մշակույթի, կենցաղի ու խոհանոցի մասին տեղեկատվության տարածումը: Մի կողմից՝ փորձ է արվում համաշխարհային հանրությանը հերթական անգամ իրազեկել Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած տառապանքների մասին, մյուս կողմից՝ գիրքը իր նպաստն է բերում հայկական «փափուկ ուժի» քաղաքականությանը, քանի որ ընթերցողին հայկական մշակույթի, կենցաղի և խոհանոցի մասին տեղեկություններ հաղորդելը նպաստելու է հայության (Հայաստանի) գրավչության մեծացմանն արտերկրում:

Հայկական սփյուռքի ներկայացուցիչներն օգնել են հույն հեղինակին ինչպես գիրքը գրելու, այնպես էլ հրատարակությունից հետո դրա մասին գովազդելու (տեղեկատվություն տարածելու) և վաճառքի հարցերում: Գիրքը գրելու փուլում Իվ Մաքիսին օգնել է Կիպրոսի Նարեկ հայկական վարժարանների բազմամյա տնօրեն, արվեստագետ Վարդան Թաշճյանը, ում հեղինակը դիմել էր «...հայրթեան եւ հայկական հարցին մասին իր տքնաջան պրպտումներու եւ հետազօտութեանց ծիրէն ներս...»¹⁷ և ով «...սիրայօժար կերպով օգնած էր հեղինակին անհրաժեշտ տեղեկութիւններ տալով հայրթեան եւ հայկական ցեղասպանութեան մասին՝ թէ՛ իր հանդիպումին ընթացքին, թէ՛ ալ հեռաձայնով կամ նամակագրութեամբ...»¹⁸:

Գրքի հրատարակությունից հետո դրա գովազդման և հասարակության լայն շերտերին դրա մասին տեղեկացնելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ 2017թ. մայիսի 2-ին Նիկոսիայում այդ գրքի շնորհանդեսի կազմակերպումը, որն իրականացվեց Բրիտանիայի և Կիպրոսի հայ համայնքների ջանքերով¹⁹: Այդ շնորհանդեսի նպատակն էր գրքի մասին տեղեկատվության տարածումը հայերի և հույների շրջանում: Բրիտանիայում դրա կազմակերպման նախաձեռնությամբ հանդես է եկել ՀՀ դեսպանության աշխատակից և հայ համայնքի գործունեության

¹⁷ Գույումճեան Ե., Հանրայայտ Գրող Իվ Մաքիս Նիկոսիոյ ՀԲԸՄ-ի Ակումբին Մեջ, <http://hayernaysor.am/cl/archives/247283>

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում:

մեջ ակտիվորեն ներգրավված Տատյանա Տեր-Ավետիսյանը: Իսկ Կիպրոսում շնորհանդեսը կազմակերպել են վերջինիս մայրը՝ Գայանե Տեր-Ավետիսյանը և ՀԲԸՄ Նիկոսիայի մասնաճյուղի ակումբը: Ինչ վերաբերում է գրքի վաճառքին, ապա Կիպրոսի «Մուֆլոն» գրատան ներկայացուցիչ տիկին Ռութ Քեշիշյանի միջոցով սպասվեցին դրա բազմաթիվ օրինակներ:

Տեղեկատվական ասպարեզում համագործակցության կարևոր դրսևորում է նաև Կ.Պոլսում լույս տեսնող հայկական «Լույս» երկշաբաթաթերթի գործունեությունը, որում հրապարակված նյութերը Թուրքիայի «...հայ, յոյն (ընդգծումը՝ հեղ.՝ Վ.Հ.), հրեայ հաւաքականութիւններու ընկերային կեանքն է որ կը լուսաբանեն...»²⁰: Պարբերականի գործունեությունը մեր կողմից դասվել է համադրական մոդելով համագործակցության ծիրում՝ նկատի ունենալով, որ այդ գործունեությունը հնարավոր է իրականացնել միայն Թուրքիայի հունական (ինչպես նաև հրեական) համայնքը ներկայացնող անհատների ու կազմակերպությունների աջակցությամբ: Երկշաբաթաթերթն ազատ ամբիոն է Թուրքիայի կրոնական փոքրամասնությունների համար, որը, բացի տեղեկատվական հաղորդագրություններից, նաև «...հարցազրոյցներով, զանազան ասպարեզներէն ներս համայնքայիններու ունեցած յաջողութիւններով, հայաշխարհէն հասած լուրերով կը գունաւորէ թերթը»²¹: Բացի տպագիր հրատարակությունից, գործում է նաև «Լույս» համացանցային հեռուստատեսությունը:

Եզրակացություններ և առաջարկություններ

Ամփոփելով՝ կարող ենք կատարել հետևյալ դիտարկումները.

1. Սփյուռքում հայ-հունական համագործակցությունը դրսևորվում է ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափով, որում, բացի հայկական և հունական համայնքներից, ընդգրկվում են նաև ասորական, քրդական և եզդիական համայնքները:
2. Հայ-հունական համագործակցությունը դրսևորվում է հիմնականում քաղաքական և որոշ չափով՝ տեղեկատվական-քարոզչական

²⁰ «Լոյս» պարբերականի տարեկան ճաշկերոյթն ու «Ամենա...»ներու մրցանակաբաշխութիւնը, Նոր Մարմարա, 29.05.2017

²¹ Նույն տեղում:

- ուլորտներում: Տնտեսական և գիտական բնագավառներում այն կամ գոյություն չունի, կամ աննշան է:
3. Քաղաքական ասպարեզում համագործակցության բազմաթիվ դրսևորումներին կարելի է ավելացնել նաև *համագործակցությունն ընտրություններում*: Այս դեպքում երկու համայնքների լոբբիստական կառույցներն ընտրություններում (տեղական, նահանգային և համապետական) կարող են միասնաբար սատարել հայկական կամ հունական համայնքի ներկայացուցչին՝ պայմանով, որ վերջինս ընտրվելու դեպքում պետական մարմիններում պաշտպանի երկու ժողովուրդների շահերը:
 4. Տեղեկատվական ոլորտում համագործակցության ինստիտուցիոնալացմանը կնպաստեր հայ-հունական լրատվամիջոցների (թերթ, հեռուստատեսություն, ռադիո կամ էլեկտրոնային կայք) հիմնումը, որոնք կլուսաբանեին երկու ժողովուրդների խնդիրները: Դա, բացի միջոցների համախմբման օրինակ լինելուց, կնպաստեր նաև հայկական և հունական խնդիրների մասին աշխարհում տեղեկացվածության բարձրացմանը, ինչպես նաև երկու ժողովուրդների հոգևոր-մշակութային էլ ավելի մերձեցմանը:
 5. Գիտական ոլորտում կարելի է զարկ տալ, ինչպես անհատ հայ և հույն մասնագետների կողմից համատեղ գիտական հետազոտությունների իրականացմանը՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող թեմաներով, այնպես էլ հայկական և հունական գիտական հաստատությունների (կենտրոնների) միջև տարբեր ձևաչափերով համագործակցությանը՝ համատեղ գիտաժողովների կազմակերպում, համատեղ գիտակրթական և հետազոտական ծրագրերի ֆինանսավորում և այլն:
 6. Գիտության ոլորտում նույնպես կարևոր նշանակություն ունի համագործակցության ինստիտուցիոնալացումը, ինչի համար անհրաժեշտ է հիմնել հայ-հունական գիտակրթական հաստատություններ: Այս ուղղությամբ առաջին քայլը կարող է լինել համատեղ «ուղեղային կենտրոնների» ստեղծումը, որոնք զարգանալով հետագայում կարող են վերաճել համալսարանների կամ այլ գիտական հաստատությունների: Այս գործին էապես կարող է նպաստել Հայաստանի

«ուղեղային կենտրոնների» (Օրինակ՝ «Նորավանք» ԳԿՀ-ի) մասնաճյուղերի հիմնումը Սփյուռքի համայնքներում, քանի որ վերջիններս կարող են նախաձեռնել ինստիտուցիոնալ մակարդակով հայ-հունական համագործակցություն, այդ թվում նաև՝ համատեղ գիտակրթական հաստատությունների ստեղծում:

7. Տնտեսության ոլորտում այս պահին դժվար է կոնկրետ առաջարկություններով հանդես գալ, քանի որ՝ ա) նախկինում այդպիսի համագործակցության որևէ դրսևորում մեզ հայտնի չէ, բ) տնտեսությունն այն բնագավառն է, որին լավագույնս տիրապետում են հենց այդ ոլորտի գործիչները՝ գործարարները: Այնուամենայնիվ, 1992թ. Աթենքում հայ և հույն գործարարների նախաձեռնությամբ ստեղծված Հունահայկական առևտրաարդյունաբերական պալատի²² օրինակով որպես առաջնային քայլ կարելի է սկսել արտերկրում հայ-հունական գործարար խորհուրդների կամ առևտրային ցանցերի ձևավորումից՝ տեղեկատվության փոխանակման և խորհրդատվական նպատակներով:

²² Տե՛ս Հայ-հունական առևտրատնտեսական կապերը կակտիվանան, <https://b24.am/mobile/economy/40896.html>

«ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ» ՈԼՈՐԱՆՆԵՐՈՒՄ

Մեք Մահակյան՝

Մայիսի 14-15-ը Պեկինում տեղի ունեցավ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» համաժողովը, որին մասնակցեցին Ռուսաստանի, Արգենտինայի, Շրի Լանկայի, Բելառուսի, Չիլիի, Չեխիայի, Ինդոնեզիայի, Ղազախստանի, Քենիայի, Լատուի, Ֆիլիպինների, Շվեյցարիայի, Թուրքիայի, Ուզբեկստանի, Վիետնամի, Կամբոջայի, Եթովպիայի, Ֆիջիի, Հունաստանի, Հունգարիայի, Իտալիայի, Մալայզիայի, Մոնղոլիայի, Մյանմարի, Պակիստանի, Լեհաստանի, Սերբիայի և Իսպանիայի ղեկավարները¹: Այս երկրների ղեկավարները Պեկին էին եկել կոնկրետ առաջարկներով: Եվ այս երկրների միջև էլ կրաժանվեն չինական հերթական ներդրումները, որոնք 2013-2016թթ. կազմել էին մոտ \$60 մլրդ, իսկ մոտ ապագայում նախատեսվում է կատարել ևս \$14, 5 մլրդ:

Չինացիները վերոնշյալ ճանապարհի երկայնքով և շրջակայքում գտնվող երկրներում կառուցում են երկաթգիծ, ճանապարհներ, նավահանգիստներ, նավթամուղներ, գազամուղներ, գործարաններ և այլն (տե՛ս *Նկ. 1*): Նման ակտիվությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքերով.

1. Չինաստանը փորձում է նոր տնտեսական բևեռ դառնալ, որպեսզի կարողանա ստեղծել սեփական թիմ, ինչն էլ թույլ կտա Պեկինին չեթարկվել տնտեսական շրջափակման Արևմուտքի հետ հնարավոր առճակատման դեպքում:
2. Վերջին տարիներին զգացվում է, որ չինական տնտեսությունը դանդաղելու միտումներ է դրսևորում: Միայն 2016թ. Չինաստանի արտաքին առևտուրը կրճատվել է 0,9%-ով: Այսինքն՝ նվազել է չինական արտադրանքի պահանջարկը: «Մեկ գոտի, մեկ ճանապարհի» շրջանակներում Չինաստանը վարկեր է տրամադրում կամ ներդրումներ

¹ Նանջինգի համալսարանի Միջազգային հարաբերությունների ինստիտուտ:

¹ <http://www.xinhuanet.com/world/brf2017/>

կատարում երրորդ երկրներում, որպեսզի նրանք իրագործեն սեփական տնտեսական ծրագրերը: Տվյալ երկրներն այդ վարկով գնում են չինական տեխնիկա և տեխնոլոգիաներ, կամ համատեղ ծրագրերի դեպքում Չինաստանն է սեփական ապրանքներով կառուցում նավահանգիստներ, երկաթգծեր և այլն: Հետագայում հենց այս ճանապարհներով պետք է տեղափոխվի նաև չինական արտադրանքն՝ արդեն արտոնյալ կարգավիճակով:

3. Տրամադրելով վարկեր և լայնածավալ ներդրումներ կատարելով զարգացող կամ դժվարությունների հանդիպած երկրներում՝ Չինաստանն իր համար ապահովում է նաև որոշակի քաղաքական ազդեցություն՝ դառնալով նրանց վստահելի գործընկերն ու հիմնական ներդրողը: Իսկ դա հետագայում կարող է ենթադրել նաև, որ հետագայում այդ երկրներում Չինաստանի կողմից կառուցված նավահանգիստներում հայտնվեն չինական ռազմանավերը:

Նկար 1

Չինական տեսլականը սեփական նախաձեռնության վերաբերյալ²



² Քարտեզը ներբեռնվել է <https://www.csis.org/> կայքից:

Չինաստանի նախաձեռնության առանձնահատկությունները

1. Ներդրումներ հնարավոր է ստանալ միայն այն դեպքում, եթե տվյալ երկիրը լավ հաշվարկված բիզնես ծրագիր ներկայացնի Պեկինին: Դիմող կողմը չինացիներին պետք է ապացուցի, որ գումարի կամ չինական տեխնիկայի ու տեխնոլոգիաների շնորհիվ ստացվող արդյունքի դեպքում Չինաստանը պետք է շահույթ ստանա դրա դիմաց:
2. Երկրները բաժանված են պայմանական խմբերի: Յուրաքանչյուր երկիր պետք է նաև ուսումնասիրի, թե ըստ սեփական տնտեսական հզորությունների և կարողությունների որ խմբի համար նախատեսված ծրագրերից կարող է դրամաշնորհ ստանալ:
3. «Մետաքսի ճանապարհ տնտեսական գոտու» և «Օնվային մետաքսի ճանապարհի» արդեն գծված քարտեզները դեռ ոչինչ չեն նշանակում: Նախաձեռնությանը կարող են մասնակցել այն բոլոր երկրները, որոնք ի վիճակի են լավ բիզնես ծրագրեր ներկայացնել:
4. Հատուկ ֆոնդ է նախատեսված նաև ոչ հզոր երկրների համար: Չինաստանը պատրաստ է «անհատույց» օգնություն տրամադրել այն երկրներին, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն լուրջ ծրագրեր ներկայացնել: Չինաստանը կարող է այդ երկրներին տրամադրել արտադրությունից հանված, ներքին և արտաքին շուկայում պահանջարկ չունեցող տեխնիկա՝ տրակտորներ, ավտոբուսներ, լվացքի մեքենաներ և այլն: Այս քայլով Չինաստանը նպատակ ունի «դուրս գրել» հնացած ապրանքը՝ հետագայում դրանց պահեստամասերի մատակարարման հույսով: Մա կարող է դառնալ չինական փափուկ քաղաքականության լծակներից մեկը, որի միջոցով Պեկինը քաղաքական դիվիդենդներ կշահի տվյալ երկրներում:

Այսպիսով Չինաստանը փորձում է ստեղծել նոր տնտեսական ցանց, որտեղ կապառի սեփական արտադրանքը, ներդրումների և վարկերի տրամադրման միջոցով ազդեցության գոտի կստեղծի սեփական քաղաքական և տնտեսական նկրտումներն իրագործելու համար: Այս տարածքում հայտնված երկրները սեփական կամքով կամ Արևմուտքի թելադրանքով ի վիճակի չեն լինի հրաժարվել Չինաստանի հետ համագործակցությունից:

Իսկ ի՞նչ կշահեն փոքր, միջին և մեծ երկրները Չինաստանի նախաձեռնությանը միանալու դեպքում: Շատ երկրներ, հատկապես Արևելյան Եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում, դեռևս լիովին չեն վերականգնվել կամ գտնվում են տնտեսական ճգնաժամում: Մասնակցելով ծրագրին և ներդրումներ ստանալով՝ այս երկրները կկարողանան վերականգնել սեփական տնտեսությունն ու ամրապնդել իրենց անվտանգությունն ու պետականությունը: Նրանք տնտեսական բազմաթիվ օղակներով կկապվեն աշխարհի երկրորդ տնտեսության հետ, կստանան վերջինի ստեղծած ժամանակակից տեխնոլոգիաները: Այն երկրները, որոնք հաջողությամբ կիրառործեն նախատեսված ծրագրերը, կստանան տնտեսական զգալի օգուտներ: Ճիշտ է՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը որոշակիորեն կմեծացնի Չինաստանի ազդեցությունն այս երկրներում, բայց նրանք էլ հնարավորություն կստանան իրենց ձայնը լսելի դարձնել Պեկինում: Մա՛ հաջողակների պարագայում:

Իսկ ի՞նչ կկորցնեն «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության մասնակիցները: Անհաջողակները, որոնք կվատնեն վերցրած գումարը, ստիպված կլինեն որոշակի ծառայություններ մատուցել Չինաստանին, օրինակ՝ ստիպված կլինեն միջազգային կառույցներում քվեարկել վերջինիս հրահանգներով կամ ռազմաբազներ, ռազմավարական նշանակության օգտակար հանածոների հանքեր հանձնել նրան և այլն:

Միջազգային ասպարեզում մշտապես օգնություն խնդրողից կոնկրետ և գործնական առաջարկ անողի վերափոխվելու օրինակ ցուցադրեց Հունաստանը: Չինաստանի ղեկավարության հրավերով «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» համաժողովին մասնակցելու համար Պեկին էր ժամանել Հունաստանի վարչապետը: Չինաստանը վերակառուցում է Միջերկրական ծովում գտնվող հունական նավահանգիստներից մեկը, որի շնորհիվ մոտ ապագայում Հունաստանը կդառնա Չինաստանը Եվրոպային կապող ծովային կամուրջներից մեկը: Այսինքն՝ ոչ թե չինացիներն են հետաքրքրվել վնասով աշխատող հունական նավահանգստով, այլ հույներն են համոզիչ բիզնես ծրագիր ներկայացրել չինացիներին և գումար ստացել: Վերակառուցվելուց հետո նավահանգիստը գումար կբերի թե՛ հույներին, թե՛ չինացիներին:

Իսկ ի՞նչ կարող է անել Հայաստանը.

1. Լրջորեն ուսումնասիրել «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը:
2. Ստեղծել արհեստավարժ թիմ, որը կմշտադիտարկի ոլորտը և արդյունքները կներկայացնի կառավարությանը:
3. Փորձել Չինաստանից ներդրումներ ստանալ գյուղատնտեսության համար՝ պայմանով, որ ստացված տեխնիկայի և նորարարական տեխնոլոգիաների փոխարեն Չինաստանին կմատակարարվեն միրգ և բանջարեղեն: Պահանջվում է, որ դրանք պետք է զերծ լինեն քիմիական հավելանյութերից և աճեցվեն «մաքուր հողերում», որոնք հեռու են քիմիական գործարաններից և թափոններից: Այսպիսի բնամթերքը կարող է հաջողություն ունենալ Չինաստանում, որտեղ հողի և օդի աղտոտվածության մակարդակը բարձր է: Նույն տրամաբանությամբ կարելի է նաև ներդրումներ ստանալ մսամթերք արտադրելու համար (Չինաստանում հատկապես մեծ է տավարի մսի պահանջարկը): Այս դեպքում ևս պետք է նշել, որ մսամթերքը լինելու է առանց քիմիական հավելանյութերի:
4. Կազմակերպել հատուկ ծրագիր, որի ընթացքում ՀՀ կիրավիրվեն չինացի գործարարներ, նրանց ներկայացնել, որ ՀՀ-ում աշխատուժն ավելի էժան է, քան Չինաստանում և հարավասիական մի շարք երկրներում: Հայաստանում արտադրելու դեպքում նրանք հնարավորություն կունենան արդյունքը վաճառել նաև Եվրասիական տնտեսական միությունում:
5. Չինաստանին առաջարկել վերականգնել և արդիականացնել Խորհրդային Միությունից մնացած հայկական քիմիական գործարաններն ու ինստիտուտները, քանի որ քիմիական ապրանքները դեռևս պահանջարկ ունեն հետխորհրդային շատ երկրներում և կարող են վաճառվել Եվրասիական տնտեսական միությունում: Հայաստանը կստանա աշխատատեղեր, Չինաստանը՝ շահույթ:
6. Ուղիղ չվերթներ կազմակերպել՝ Երևան-Պեկին-Երևան, Երևան-Շանհայ-Երևան, Երևան-Գուանջոու-Երևան: Այս քայլի միջոցով

- կհեշտանա հայ գործարարների մուտքը Չինաստան, կմեծանա չինացի զբոսաշրջիկների թիվը: Ի դեպ, քանի որ Չինաստանում մեծ հետաքրքրություն կա քրիստոնեության նկատմամբ, ճիշտ գովազդի դեպքում, կարծում եմ, շատերը կհետաքրքրվեն ՀՀ ժամանելով, որն աշխարհում առաջինն է քրիստոնեությունն ընդունել որպես պետական կրոն: Հնարավոր տարբերակ է, որ հետաքրքրություն առաջացնեն նաև էկոտուրիզմն ու «մաքուր օդ» շնչելու գաղափարը: Սա հնարավոր կլինի, եթե կրճատվեն չվերթների ժամանակն ու տոմսերի գինը, Հայաստանը հավուր պատշաճի գովազդվի Չինաստանում:
7. Ցայժմ նույնիսկ Չինաստանի վիզա ստանալու դեպքում ՀՀ քաղաքացին պարտավոր է գումար ծախսել, բյուրոկրատական քաշքշուկի մեջ ընկնել Հոնկոնգի առանձին վիզա ձեռք բերելու համար: Մինչդեռ՝ աշխարհի մյուս երկրների քաղաքացիները, չինական վիզա ունենալով, հնարավորություն են ստանում ճանապարհորդել Չինաստանի ամբողջ տարածքում, այդ թվում նաև Հոնկոնգում: Իսկ «հատուկ ցուցակում» գտնվող մի շարք երկրների՝ Աֆղանստանի, Հայաստանի, Սումալիի քաղաքացիները Հոնկոնգ այցելելու համար ընկնում են քաշքշուկների մեջ: Պետք է ՀՀ-ն հանել այդ ցուցակից և վերադարձնել «նորմալ երկրների» ցանկ, որպեսզի ՀՀ քաղաքացիները ևս Չինաստանի վիզա ստանալու դեպքում դյուրին մուտք գործեն նաև ֆինանսական ու նորարարական տեխնոլոգիաների միջազգային կենտրոն համարվող Հոնկոնգ:

ՏՎՅԱԼՆԵՐԸ՝
ՈՐՊԵՍ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐ
ԵՎ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Արա Մարջանյան՝

Կարեն Վարդանյանի (1987-2016թթ.) հիշատակին

Արդի աշխարհի թերևս ամենաբնութագրական միտումներից են հետևյալ երկուսը. տվյալները (*data*), հատկապես՝ թվայնացված տվյալները, դառնում են համընդհանուր և ունիվերսալ արժեք՝ հին աշխարհի ոսկու նման, իսկ երկրների կամ կորպորացիաների տվյալների շտեմարաններն այլևս գիտակցվում են որպես կարևորագույն «բնական պաշար»՝ նավթի կամ նույն ոսկու նման: Ավելին, երկրների հզորության (*might*) գնահատականներում, բնական ու մարդկային պաշարներ, տեխնոլոգիական ունակություններ կարևորագույն ցուցիչների կողքին, այսօր բերվում են նաև երկրում առկա տվյալների մեծ կենտրոնների (*SU*Կ, *Big Data Centers*) քանակն ու դրանց որակական դասը (*Tier*)¹:

Մյուս կարևոր միտումը լեզվական (թվայնացված՝ գրավոր և բանավոր) հենքի վրա տվյալների մեծ շտեմարանների ստեղծման (լեզվական ազգային համակազմներ՝ կորպուսներ, օրական լրահոսի, սոցցանցերի շտեմարաններ, մշակութաբանական և պատմական կորպուսներ և այլն) և այդ տվյալներն այս կամ այն նպատակով մշակելու արդի մեթոդների (*Big Data Mining, Big Data Processing*) ստեղծումն է: Առաջընթացն այստեղ պարզապես աննախադեպ է, թե՛ կիրառական բնույթի տարատեսակ ձեռնարկումներում, թե՛ հիմնարար նշանակության ուսումնասիրություններում (մշակութաբանություն, սոցիալական և լեզվական հոգեբանություն, կոր-

¹ «Նորվանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ, տ.գ.թ., ա.գ.ա.:

¹ *Մարջանյան Ա.Հ.*, Բառերի տիեզերք II. Կուլտուրոմիկա, Տվյալների մեծ շտեմարանները և մենք, «21-րդ ԴԱԸ», պատրաստվում է տպագրության:

պուսային լեզվաբանություն և այլն), թե՛ գիտելիքների և տվյալների մեծ շտեմարանների ստեղծման առումով²: Եվ նորից, երկրների հզորության գնահատականներում լեզվական տարատեսակ կորպուսների առկայությունը ներկայում նույնքան կարևոր դերակատարում ունի, որքան բանակային կորպուսների առկայությունը:

Բերենք կիրառական բնույթի մի քանի օրինակ: Սոցցանցերի ԹԻՀ մշակման արդի մեթոդները թույլ են տալիս իրականացնել տվյալ երկրի հանրության տարբեր խմբերի *բիհեյվորիստական* մոդելավորումը (*Behavioral modeling*)³ և վարքի կանխատեսումը: Օրական լրահոսի և սոցցանցերի գրառումների «զգացմունքների լեռնահանման» (*text sentiment mining*, 2004) և տեքստերի տեղավայրային կոդավորման (*full-text geocoding*, 2007) միջոցով հնարավոր եղավ մոդելավորել «Արաբական գարնան» իրադարձությունները, դրանց ուժգնությունը՝ Թունիսում և Եգիպտոսում (ռեժիմների փոփոխության) և թուլությունը՝ Մաուդյան Արաբիայում (իշխանափոխության ցածր հավանականություն), տոնայնա-տեղորոշման (*geocoded tone*) գլոբալ գրաֆի կառուցման միջոցով տեղորոշել առանձին անհատների, մասնավորապես Օ. Բին Լադենի գտնվելու վայրը⁴: Իսկ օգտատերերի պրոֆիլավորման արդի մեթոդներն էականորեն օժանդակեցին ԱՄՆ-ում նախագահական ընտրություններում Դ.Թրամփի հաղթանակին⁵:

Հայ Վիքիպեդիան՝ որպես կորպուս. քանակական ասպեկտ

Ցավոք, նշված ուղղություններով Հայաստանում ուսումնասիրությունները գտնվում են դեռ սաղմնային վիճակում. թերևս, մեկ բացառությամբ՝ խոսքը հայերեն *Wikipedia*-ի մասին է:

² Մարջանյան Ս.Հ., Բառերի տիեզերք. Հաճախակիության բառարանները և Google N-grams գործիքը, «21-րդ ԴԱԸ», N4 (74), 2017:

³ Eagle N., Pentland A.S., Eigenbehaviors: identifying structure in routine. *Behav. Ecol. Sociobiol.*, 63, 2009, pp. 1057-1066.

⁴ Leetaru K.H., Culturomics 2.0: Forecasting Large-Scale Human Behavior Using Global News Media Tone In Time And Space". *First Monday*, No 16 (9), 5 September 2011.


⁵ Youyou Wu, Kosinski, Michal Stillwell David, Computer-based personality judgments are more accurate than those made by humans. *PNAS*, vol. 112, no. 4. January 27, 2015; Трамп победил на выборах благодаря ученым и Big Data. *Das Magazin*, 8 декабря 2016,

<https://hi-tech.mail.ru/news/how-trump-won/?frommail=1&fromnews=1>

Ընդհանրապես, *Wikipedia*-ն թողարկվել է 2001թ. հունվարի 15-ին, միայն անգլերեն: 2001թ. ավարտին առկա էին արդեն 18 լեզուներով 20.000 հոդվածներ: Լեզուների թիվը հասավ 26-ի՝ 2002-ի վերջին, 46-ի՝ 2003-ին և 161-ի՝ 2004-ի ավարտին: 2009-ի հունվարին լեզուների թիվը հասավ 247-ի, իսկ ներկայում այն կազմում է 263: Հոդվածների թվի առումով 2007թ. սեպտեմբերին անգլերեն *Wiki* հանրագիտարանը (ավելի քան 2 մլն հոդված) առաջին անգամ գերազանցեց դեռ Մին դինաստիայի օրոք (1408թ.) կազմված և անցած 6 դարերի ռեկորդակիր չինական Յուն Չժի (*Yon gle*) հանրագիտարանին: 2005-ին հեղինակավոր *Nature* ամսագրի տվյալներով՝ *Wikipedia*-ն (անգլերեն կորպուսը) իր ճշգրտությամբ մոտեցավ հռչակավոր *Encyclopædia Britannica* հանրագիտարանին⁶:

Գծապատկեր 1

Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն Wiki-կորպուսների կարգաչիւն տեղը 2017թ. հունվարի դրությամբ



Ադրբեջաներեն *Wikipedia*-ն մեկնարկեց 2002թ. հուլիսին (Գծապատկեր 1): 2002-ին իր հիմնական քանակական ցուցանիշով՝ *Wiki* հոդվածների թվով (A) այն զբաղեցնում էր 21-րդ տեղը (կարգը) 34-ից: Մինչ 2004-ի հոկտեմբերը

⁶ Internet encyclopaedias go head to head with *Encyclopaedia Britannica*. *Nature*, 438, 900-901; 2005.

ադրբեջաներեն *Wiki*-կորպուսը Անդրկովկասի առաջատարն էր: Այն զիջում է վրացերենին միայն 2011թ. հունվարին: Հայալեզու *Wiki*-ն սկսեց բարելավել իր կարգային տեղը՝ սկսած 2009-ից, երբ հոկտեմբերին գրանցած 109-րդ կարգից հասավ 66-ի 2013թ. հուլիսին: Վճռական թռիչքը տեղի ունեցավ 2013-ի հոկտեմբերին, երբ հայալեզու *Wiki*-ն իր շուրջ 47 հազ. հոդվածներով հայտնվեց առաջին 50-յակում՝ գրավելով 45-րդ կարգը: 2016թ. հոկտեմբերին հայերեն *Wiki*-ն իր մոտ 210 հազ. հոդվածներով զբաղեցնում էր 37-րդ կարգը՝ շոշափելիորեն գերազանցելով ադրբեջաներեն (111 հազ. հոդված, 54-րդ կարգ) և վրացերեն (109 հազ. հոդված, 57-րդ կարգ) *Wiki*-կորպուսներին: Հայերեն *Wiki*-ի լեզվական կորպուսի ծավալը, եթե այն գոյություն ունենար, կկազմեր մոտ 20-21 MiB (ազգային լեզվական կորպուսների և լեզվական շտեմարանների մասին ավելի մանրամասն տե՛ս⁷): Հավելենք, որ հազեցումով պրոցեսներին հաստուկ օրինաչափությամբ ադրբեջաներեն և վրացերեն հոդվածներից հայալեզու *Wiki*-հոդվածների թվի գրեթե կրկնակի գերազանցումը (100%) ողջ *Wikipedia*-ի կտրվածքով ապահովում է ընդամենը 18-20 կարգային տեղի առաջխաղացում (7-8%): Պարետոյի օրենքի⁸ «ջանքի 80%-ը կպահանջվի արդյունքի վերջին 20%-ին հասնելու համար» տրամաբանությունը հուշում է, որ հետագա առաջխաղացման համար (օրինակ՝ տեղ զբաղեցնել առաջին 30 կամ 20-յակում) անհրաժեշտ կլինի որակական նոր թռիչք:

Ընդգծենք հետևյալը: 2013թ. վճռական թռիչքը հնարավոր եղավ իրականացնել այն բանից հետո միայն, երբ թվայնացվեց և համացանցում հանրայնացվեց 1974-87թթ. հրատարակված, շուրջ 50 հազ. հոդված ունեցող Հայկական սովետական հանրագիտարանը (ՀՍՀ)⁹, ինչը լուրջ ներդրում էր հայերեն լեզվական դաշտում համակարգված, որակյալ, թվայնացված կորպուսի ստեղծման գործում: Խորհրդային հանրապետությունների մեջ բարձր վարկանիշ ունեցող ՀՍՀ-ն այսպիսով նպաստեց Հայաստանի 3-րդ հանրապե-

⁷ Մարջանյան Ա.Հ., Բառերի տիեզերք. Հաճախակիության բառարանները և Google N-grams գործիքը, «21-րդ ԴԱԸ», N4 (74), 2017:

⁸ 2016-ի դեկտեմբերի դրությամբ հայալեզու Wiki-կորպուսում բացակայում էին «Պարետոյի օրենք», ինչպես նաև «Ցիպֆի օրենք», լեզվահաճախականային վերլուծություն, կորպուսային լեզվաբանություն և այլ հարակից հոդվածները:

⁹ Հայաստանի Հանրային ռադիո. Հայկական սովետական հանրագիտարանն այսուհետ հասանելի է նաև Վիքիպեդիայում: 18:20, 02 օգս. 2013. Հայկական հանրագիտարան ստեղծելու 1932-36թթ. առաջին փորձը ձախողվեց:

տության «թվայնացվածության» կայացմանը: Խնդիրն այստեղ հետևյալն է. արդյո՞ք ունակ կլինի Հայաստանի 3-րդ հանրապետությունը գեներացնել իմաստային առումով՝ խոր, կառուցվածքային առումով՝ լավ ստրուկտուրացված և փոխկապակցված, իմաստների (տվյալների, գիտելիքների) այնպիսի բազմություն, որը ոչ միայն համեմատելի լիներ ՀՄՀ-ի հետ, այլև գերազանցեր այն թե՛ քանակապես, թե՛ որակապես: Քանզի գիտելիքների և տվյալների (*data*) արդի, վերին աստիճանի մրցունակ ու դաժան աշխարհում նախկին քանակա-որակական ցուցանիշներն այլևս բավարար չեն զարգացման համար:

Վիքիպեդիա. լեզվաքանակական և որակական ասպեկտ

Համաձայն հեղինակավոր *Ethnologue* ամսագրի¹⁰, այսօր աշխարհում գոյություն ունի 7099 կենդանի լեզու: Մյուս կողմից, ներկայում աշխարհում առկա է 195 ճանաչված պետություն, որից 193-ը՝ ՄԱԿ անդամ: Այսպիսով, կենդանի լեզու ունեցող մարդկային հանրությունների կողմից պետականությունն իրացված է միայն մոտ 2.75% կողմից: Գծապատկեր 2-ում ամբողջացրել ենք 50 մլն մարդ և ավելի կրող (մայրենի՝ L1, 2-րդ լեզու՝ L2) ունեցող 26 լեզուների մասին *Ethnologue*, *SIL Int.* տվյալները: Գումարային առումով դրանք կազմում են 6.6 մլրդ մարդ՝ մոլորակի այսօրվա բնակչության (7.4 մլրդ) 89%-ը: Լուսամուտում բերվում է նաև կրողների կառուցվածքը (մլն մարդ և %) ըստ լեզվական ընտանիքների:

Ինչպես տեսնում ենք, կրողների մոտ 41%-ը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին, ևս 20%-ը՝ հնդարիական, ներառյալ՝ դրավիդյան լեզուները: Հետևաբար, բնակչության շուրջ 61%-ը պատկանում է հնդեվրոպա-արիական գերընտանիքին, այդ թվում L1 կրողների 58%-ը (մոտ 2.73 մլրդ, որից 1.69 մլրդ՝ հնդեվրոպական), L2 կրողների՝ 65%-ը (մոտ 1.27 մլրդ, որից մոտ 1.02 մլրդ՝ հնդեվրոպական)¹¹: Իսկ Սինոտիբեթյան լեզվաընտանիքին է պատկանում միայն 18%-ը, կամ L1 կրողների


¹⁰ *Ethnologue: Languages of the World*. 20-th edition, Simons & Fennig, 2017, <https://www.ethnologue.com/about>

¹¹ Մենք չենք անդրադառնում L2/L1 հարաբերությանը, որը չափազանց էական ցուցիչ է «մոլորակի տարածաշրջանների» (*Regions of the World*) ձևավորման և զարգացման առումով: Մենք դրանք կոչում ենք «Աշխարհի աշխարհներ» (*Марджанян А.А., Арутюнян, Г.А., Союзники на фоне научно-технологического пейзажа. Тр. межд. конференции «Демократия и сетевые технологии в современном социально-политическом процессе», 18 мая, 2017. М. ФИП/РГГУ, 2017.*): Տարածում է ստացել նաև դրանց «աշխարհ-համակարգ» (*мир-система, world-system*) անվանումը:

22%-ը (մոտ 1.04 մլրդ) և Լ2 կրողների 9%-ը (178 մլն): Առանձին լեզուների տեսանկյունից ամենաբազմաթիվը Մանդարին չինարենն է (ներառյալ դասական չինարենը)՝ 899 մլն Լ1, և մոտ 178 մլն Լ2 կրողներ, որին հաջորդում են անգլերենն ու իսպաներենը (500 մլն Լ1 կրողներ յուրաքանչյուրը), և հինդուստանին (հինդի և ուրդու, 438 մլն Լ1 կրողներ): Առաջին 6-յակը եզրափակում են արաբերենն ու պորտուգալերենը (տես՝ Գծապատկեր 2):

Գծապատկեր 2

Լեզվի (լեզվական ընտանիքների) կրողներ, մլն մարդ.
 Լ1 կրողներ՝ մայրենի լեզու, Լ2 կրողներ՝ որպես 2-րդ լեզու:
 Ըստ Ethnologue 2015, SIL Int.



Միևնույն ժամանակ, 2017թ. մայիսի դրությամբ *Wikipedia*-ն առկա էր 263 լեզուներով: Այսինքն՝ համաշխարհային հանրագիտարանում կենդանի լեզու ունեցող մարդկային հանրությունների ներկայացվածության


աստիճանը կազմում է մոտ 3.94% կամ 43%-ով ավելի, քան պետականության իրացման ցուցիչը: Ընդ որում, լեզվամշակութային դաշտի պահպանման և զարգացման առումով, հատկապես վտանգված լեզուների¹² և պետականություն չունեցող ազգային փոքրամասնությունների համար, ինչպես նաև աշխարհաքաղաքական գործընթացների «Ազգերի կերտման» (*Nation building*) տեսանկյունից, վերլուծաբանների համար մեծ նշանակություն ունեն *Wikipedia*-ի լեզվական կորպուսների քանակաորակական ցուցանիշները և դրանց դինամիկայի գնումը: Դրանցից երկուսը հանդիսանում են *Wiki* տվյալ լեզվական կորպուսում հոդվածների քանակը (A) և այսպես կոչված հոդվածների խմբագրության խորությունը կամ պարզապես խորությունը (D)¹³: Գծապատկեր 3-ում՝ ձախից, բերում ենք *Wiki*-հոդվածների թվով առաջատար 15 լեզվական կորպուսները: 2017թ. հունվարի դրությամբ բացարձակ առաջատարը շարունակում էր մնալ անգլերենը՝ մոտ 5.3 մլն հոդված (5.0 մլն շեմը այն հասել է 2015-ի սեպտեմբերին, 4.0 մլն-ը՝ 2012թ. հոկտեմբերին, 1.0 մլն-ը՝ 2006թ. ապրիլին): Առաջատարների ցանկում է նաև շվեդերենը՝ մոտ 3.7 մլն հոդված, գերմաներենը՝ մոտ 2.1 մլն հոդված (1.0 մլն շեմը այն հասել է 2009-ի օգոստոսին), հոլանդերենը՝ մոտ 1.9 մլն հոդված (1.0 մլն շեմը՝ 2012թ. հունիսին), ֆրանսերենը և ռուսերենը՝ մոտ 1.4 մլն հոդված (1.0 մլն շեմը հատվել է 2013թ. մայիսին): Ուշագրավ է, որ թուրքերեն *Wiki*-կորպուսը 2016թ. հոկտեմբերի դրությամբ ուներ մոտ 285 հազ. հոդված, ինչը հայերեն *Wiki*-կորպուսից ավելին է ընդամենը 35%-ով: Այնինչ, 2016-ին Թուրքիայի բնակչությունը գերազանցում էր Հայաստանի բնակչությանը մոտ 27 անգամ (2700%-ով):

¹² Լուրջ բացթողում պետք է համարել այն հանգամանքը, որ 2000-ականների սկզբին 3-րդ հանրապետությունը թերացավ գրանցել արևմտահայերենը, համշեներենը և այլ հայկական լեզուներ՝ որպես վտանգված լեզուներ: Աններելի է նաև արևմտահայերեն *Wiki*-կորպուսի բացակայությունը և արևմտահայերենի գրանցման բացակայությունը *Wikimedia*-յում: Հավելենք, որ UNESCO-ի Վտանգված լեզուների ատլասը (*UNESCO Atlas of the World's Languages in Danger*) ճանաչում է Հայաստանի համար՝ 2 լեզու (Pontic Greek, Suret), Վրաստանի համար՝ 11 լեզու (այդ թվում և համշեներենը), Ադրբեջանի համար՝ 11 լեզու (բուդուլ, ջուհուր, խինալուզ, կիլիթ, կրիզ, լեզգի, ռութուլ, թալիշ, թաթ, ծախուր և ուրի), <http://www.unesco.org/languages-atlas/index.php?hl=en&page=atlasmap>

¹³ Նկատենք, որ սա *Wiki*-կորպուսի որակական միակ չափելի ցուցանիշն է: Հաղվածների ակադեմիական որակի այլ գնահատականներն անխուսափելիորեն սուբյեկտիվ են: Ավելի մանրամասն տե՛ս https://meta.wikimedia.org/wiki/Wikipedia_article_depth

Գծապատկեր 3

Wiki լեզվական կորպուսների առաջատար 15-յակը՝ ըստ հոդվածների և խորության, 2017թ. մայիսի 27-ի դրությամբ



Ուշագրավ է նաև այն, որ առաջատարների ցանկում են Ֆիլիպիններում տարածված սերբուհերեն (4.54 մլն հոդված, 2-րդ տեղ) և վարայա-վարայա (1.26 մլն հոդված, 10-րդ տեղ) լեզուները: Այնինչ, լեզու կրողների առումով (սերբուհերեն՝ 15.8 մլն L1 և L2 կրող, վարայա-վարայա՝ 2.56 մլն L1 և L2 կրող)¹⁴, այս լեզվական կորպուսները կարծես թե չպետք է ունենային հոդվածների այսքան քանակ: Բանն այստեղ այն է, որ այս քանակական արդյունքն ըստ էության միայն մեկ անհատի՝ շվեդերեն *Wikipedia*-ի ակտիվիստ և ծրագրավորող Ս.Յոհանսոնի (*Sverker Johansson*) գործունեության հետևանք է, որը ժամանակին մշակեց և 2012-ի վերջին թողարկեց *Lsjbot* համացանցային ռոբոտ ծրագիրը, սերբուհերեն լեզվով *Wiki*-հոդվածների ստեղծման համար¹⁵:

¹⁴ <https://www.ethnologue.com/language/ceb> , <https://www.ethnologue.com/language/war>
¹⁵ *Lsjbot*-ը ապահովել է սերբուհերեն *Wiki*-կորպուսի ծավալի 2/3-րդը և շվեդերեն *Wiki*-կորպուսի ավելի քան 1.0 մլն հոդվածների ստեղծումը, <https://www.quora.com/Why-are-there-so-many-articles-in-the-Cebuano-language-on-Wikipedia>

Այսպիսով, վերլուծությունների համար դեռ բավարար չէ հիմնվել միայն քանակական ցուցանիշների վրա: Ուստի, Գծապատկեր 3-ում՝ աջից, բերում ենք նաև առաջատար *Wiki*-կորպուսների 15-յակը՝ դասակարգված ըստ հոդվածների խորության: Ինչպես տեսնում ենք, ցանկն այստեղ միանգամայն այլ է՝ մեկ հատկանշական բացառությամբ: Անգլերեն *Wiki*-կորպուսն առաջատար է թե՛ հոդվածների քանակով, թե՛ հոդվածների խորությամբ: Այս հանգամանքը լավագույնս արտացոլում է «Անգլոսաքսոնական աշխարհի» ներքին աշխարհաքաղաքական, լեզվական ու քաղաքակրթական կոնսոլիդացիան¹⁶, անգլերեն լեզվի կրողների բաշխվածությունը (տես՝ Գծապատկեր 3) և լեզվի հաճախա-հակիրճային առանձնահատկությունները¹⁷: Մինչդեռ, օրինակ, ծավալով 2-րդ ու շատ իմաստներով՝ արևեստածին սերունո *Wiki*-կորպուսը խորությամբ ընդամենը 252-րդն է 263-ից: Հավելենք, որ 2017թ. մայիսի դրությամբ հայերեն *Wiki*-կորպուսի խորությունը կազմում էր ընդամենը 35.41 (123-րդ կարգ 263-ից), այնինչ ծավալային առումով այն գրավում էր 36-րդ կարգը՝ 263-ից¹⁸:

Տվյալ լեզվական *Wiki*-կորպուսի քանակա-որակային և ժամանակագրական առանձնահատկությունները հանդիսանում են աշխարհաքաղաքական, մշակութային, քաղաքական և լեզվա-ազգայնական գործընթացների ինտեգրալ ցուցիչ: Այս առումով օգտակար է դիտարկել աշխարհի *Wiki*-կորպուսների «քարտեզը»՝ կառուցված հոդվածների թիվ (A)-հոդվածների խորություն (D) առանցքներով (լոգարիթմական մասշտաբ): Այդպիսի մի օրինակ բերում ենք Գծապատկեր 4-ում, ուր նշված են որոշ *Wiki*-կորպուսների դիրքերը 2017թ. մայիսի 27-ի դրությամբ: Հատուկ ընդգծենք այն հանգամանքը, որ *Wiki*-կորպուսների խորությունը (D) հանդիսանում է տվյալ լեզվի (լեզվական խմբի) ներսում և շուրջ, ինչպես նաև դրա սփռվածության տարածքում հանրային, հասարակական, քա-

¹⁶ *Марджанян А.А., Арутюнян, Г.А.*, Союзники на фоне научно-технологического пейзажа. Тр. между. конференции «Демократия и сетевые технологии в современном социально-политическом процессе», 18 мая, 2017. М. ФИП/РГГУ, 2017.

¹⁷ *Մարջանյան Ա.Հ.*, Բառերի տիեզերք. Հաճախակիության բառարանները և Google N-grams գործիքը, *Նկար 1*, «21-րդ դար», N4 (74), 2017:


¹⁸ 2017թ. մայիսի 27-ի դրությամբ թուրքերեն *Wiki*-կորպուսը գրավում էր 29-րդ կարգը՝ ըստ ծավալի և 17-րդը՝ ըստ խորության (D=221), ադրբեջաներենը՝ 56-րդն ըստ ծավալի և 130-րդը՝ ըստ խորության (D=34), վրացերենը՝ 58-րդն ըստ ծավալի և 133-րդը՝ ըստ խորության (D=33):

րանի կորպուսի խորությամբ 2017թ. մայիսի դրությամբ կազմում է $D=113.87$, ինչն ապահովում է դրա 47-րդ կարգային տեղը: Այնինչ, ըստ ծավալի, սորանի կորպուսն ընդամենը 112-րդն է 263-ից: Ավելին, սորանի կորպուսն էապես գերազանցում է քրդական մի այլ *Wiki*-կորպուսի՝ հս. քրդերենի կուրմանջի կորպուսին, որը ներկայում ունի $D=29.95$ խորություն (144 կարգը 263-ից), թեև ունի մոտ 1.5 անգամ ավելի հոդված, քան սորանին: Ընդհանրապես, 2017թ. մայիսի դրությամբ, խորության ցուցանիշով սորանին առաջ էր, օրինակ, 92 մլն Լ1 և Լ2 լեզվական կրող ունեցող թելուգու կորպուսից (դրավիդյան լեզվաընտանիք) կամ մոտ 2.1 մլն հոդված ունեցող և ծավալով 6-րդ՝ գերմաներեն *Wiki*-կորպուսից:

Այս համատեքստում միանգամայն այլ լույսի ներքո է դիտվում այն հանգամանքը, որ 2017թ. սեպտեմբերին նախատեսվում է անցկացնել Իրաքյան Քրդստանի ինքնորոշման հանրաքվեն (տե՛ս Քարտեզ 1), իսկ հոկտեմբերին՝ կատալոնական ինքնորոշման հանրաքվեն Իսպանիայում:

Քարտեզ 1

Քրդական լեզուների աշխարհագրական բաշխումը,
Le Monde diplomatique, 2007



ՆՅԱՐԴԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄԸ

Նվարդ Մելքոնյան՝

Մեր օրերում ԶԼՄ-ում հաճախակի կիրառվող հոգեբանական ազդեցության մեխանիզմներից է նյարդալեզվաբանական ծրագրավորումը՝ ՆԼԾ-ն (*Neuro-Linguistic Programming – NLP*): Կիրառական հոգեբանության այս ուղղությունը ստեղծվել է ԱՄՆ-ում 1970-ականների կեսերին, Ջ.Գրինդերի և Ռ.Բենդլերի կողմից: ՆԼ ծրագրավորման հիմնադրույթն է այն, որ մարդիկ իրենց ուղղված հաղորդագրություններն ընկալում են 3 տարբեր հարթություններում.

1. Վիզուալ (այս տիպն իրականությունն ընկալում է տեսողական պատկերների, կերպարների միջոցով: Սա ամենատարածված տիպն է, մարդկանց մոտ 80%-ը վիզուալներ են);
2. Աուդիալ (այս տիպին պատկանող մարդիկ աշխարհը նկարագրում և պատկերացնում են լսողական, ձայնային կերպարների միջոցով: Մարդկանց 15%-ը աուդիալներ են);
3. Կինեստետիկ (5%-ն աշխարհն ընկալում է զգացմունքների և զգացողությունների միջոցով (համի, շոշափելիքի և այլն):

Գիտակցության մեջ միջինը տպավորվում և պահպանվում է վիզուալ ալիքների միջոցով ստացված տեղեկատվության 75%-ը, աուդիալ ճանապարհով ստացված տեղեկատվության 13%-ը, իսկ մնացածը ստացվում է կինեստետիկ ճանապարհով: Զրույցն ավելի բնական դարձնելու համար կարելի է այդ ալիքները համապատասխանեցնել և հարմարեցնել լեզվի միջոցով¹: Արդյունավետ մանիպուլյացիան ենթադրում է լսարանի լեզվով երկխոսության իրականացում, որտեղ հաղորդագրությունը միաժամանակ

¹ ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ:

¹ *Кара-Мурза С.Г.*, *Манипуляция сознанием*, Москва, Алгоритм, 2007, с. 76-86.

պետք է ուղղված լինի և՛ վիզուալներին՝ լինի պատկերավոր, և՛ աուդիալներին՝ ձայնային և ինտոնացիոն համապատասխան ազդեցություն ունենա, և՛ կինեստետիկներին՝ ստեղծելով համապատասխան զգացողություններ՝ համակրանք կամ տհաճություն²: Այս սկզբունքն իրագործվում է յուրաքանչյուր տիպի համար համապատասխան պրեդիկատներ կիրառելով: Օրինակ, վիզուալների համար՝ «պարզ երևում է», «ակնհայտ է», «վառ է», աուդիալների համար՝ «հնչել է», «աղմուկ բարձրացավ», կինեստետիկների՝ «ծանր հարց է», «լողզած պատասխան էր», «նուրբ, փխրուն թեմա է» և այլն:

ՆԼԾ-ն վարքային մոդել է և մանրամասնորեն մշակված տեխնիկական հնարքների համալիր, որը հիմնված է մարդկային գիտակցության և ենթագիտակցության վրա լեզվական ձևերի ազդեցության, ուղեղի և լեզվի փոխազդեցության արդյունքում զարգացում ստացող ձևերի և կարծրատիպերի կամ «ծրագրերի» վրա:

ԶԼՄ-ում ՆԼԾ տեխնիկաները նպատակահարմար է կիրառել հատկապես դրանց ենթագիտակցության վրա ազդեցություն ունենալու տեսանկյունից: Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում խարսխման տեխնիկաները: Տվյալ համատեքստում խարսխիչը ցանկացած արտաքին գրգռիչ է, խթան, որը հանգեցնում է համապատասխան արձագանքի: Խարսխումը գործընթաց է, որի միջոցով յուրաքանչյուր իրադարձություն՝ ներքին կամ արտաքին (բառ, ձայն, ժեստ, ինտոնացիա, հպում), կարող է կապված լինել որևէ ռեակցիայի և կիրառման դեպքում նորից առաջացնի դրա դրսևորումը: Որպես խարսխ կարող է հանդես գալ ցանկացած բառ, հնչյուն, պատկեր և այլն:

Առանձնացնում են խարսխիների երեք հիմնական տեսակներ.

1. *Չրական սոցիալական դիրքորոշումների խարսխի*. Այս տեսակը ենթադրում է թևավոր խոսքերի, նշանավոր անձանց արտահայտությունների, ասացվածքների, հայտնի անեկդոտների ներառումը մեդիա-տեքստում: Նման տեքստերը, որպես կանոն, հիմնվում է այլուգիաների վրա: Այլուգիան հնարք է, որի շրջանակներում ոճային

² Дж. О'Коннор, Дж. Сеймор, Введение в нейролингвистическое программирование. Челябинск, «Библиотека А.Миллера», 1998, с. 35.

- էֆեկտները ստեղծվում են լսարանին արդեն հայտնի ֆիլմերի, գրքերի, արտահայտությունների միջոցով:
2. *Դրական էմոցիոնալ բնույթի խարխախ.* Այս հնարքը հիմնվում է հումորի, բարյացակամ տրամադրվածության (ուրախություն, տոն, երջանկություն և այլն), երջանիկ մարդկանց, հաճելի կերպարների ներկայացման և այլնի վրա: Այսպիսով, կերտվում է դրական տրամադրվածություն, ոգևորություն, որախության կայուն պատկեր: ՀՀ վարչապետի միջտ ժպիտով նկարները, նրա դրական տրամադրվածությամբ խոսելը և մյուսներին խորհուրդ տալը՝ որ ավելի օպտիմիստ լինեն, շատերի մեջ առաջացնում է նման զգացողություն:
 3. *Արքետիպերի և ազգային մշակույթի պատկերների խարխախ.* Այս դեպքում անդրադարձ է կատարվում խորքային ավանդույթներին, օգտագործվում են ազգային ֆոլկլորային կերպարները: Օրինակ, «բոլորը Քաջ Նազարի նման», «մեջը խոսեց Ծուռ Սասունը», «ժողովրդի համբերության բաժակը» և այլն:

Մեղիա-տեքստերում սուգեստիվ տեխնիկաների կիրառման գործընթացում, բացի նյարդալեզվաբանական ծրագրավորումից, հաճախ կիրառվում են նաև Էրիկսոնյան հիպնոսի տեխնիկաները և հնարքները:

Էրիկսոնյան հիպնոսի տեխնիկաների խումբը ներառում է տրանսի մեջ գցելու կամ սթափ՝ արթուն իրավիճակում ներշնչելու լեզվական ռազմավարությունները:

Էրիկսոնյան հիպնոսի հիմնական գաղափարն այն է, որ այստեղ, որպես կանոն, բացակայում են ուղիղ հրահանգները: Փոխարենը՝ նկատելի են քննարկում, հարց ու պատասխան, խորհուրդ որևէ հարցի վերաբերյալ: Արդյունքում՝ այս տիպի լեզվական տեխնիկաները հնարավորություն են տալիս հասնելու ցանկալի արդյունքին՝ խուսափելով մարդկանց ուղիղ հրահանգների հակադրվելու սովորությունը: Էրիկսոնյան հիպնոսն առաջարկում է մի շարք հնարքներ նման ազդեցությունը չեզոքացնելու համար: Դրանցից հիմնականներն են.

- թրյուիզմ,
- ընտրության խաբկանք,

- ենթադրություններ (presuppositions՝ լատիներեն *prae* - առաջ, նախա- և *suppositio* - գրավ, ավանդ),
- հակադրությունների օգտագործում, մենք – նրանք,
- լիարժեք ընտրություն:

Դիտարկենք յուրաքանչյուրն առանձին:

Թրյուիզմը (անգլերեն՝ *truism, true*՝ ճշգրիտ, հայտնի ճշմարտություն), որպես կանոն, գերընդհանրացված արտահայտություն է: Որպես հոգետեխնիկա այն հիպնոտիկ հրահանգի փոխարինումն է ընդհանրացված արտահայտությամբ: Օրինակ, «օրինապահ քաղաքացին այդպես չէր վարվի», «բոլորը լքում են երկիրը»: Կոռուպցիայի դեմ պայքարը գործ տվողի է նմանեցվում՝ «դա հային բնորոշ չէ»:

Ընտրության խաբկանքի շրջանակներում լսարանին կանգնեցնում են կեղծ ընտրության առջև՝ առաջարկելով ընտրել միևնույն տարբերակը չնչին տարբերությամբ: Սա լսարանում ստեղծում է ազատ ընտրության պատրանք, սակայն այլընտրանքները սահմանափակ են կամ նույնիսկ բացակայում են: Օրինակ, «Դուք ընտրությունների կզնաք առավոտյա՞ն, թե՞ երեկոյան ժամի»:

Ենթադրությունների կիրառման տեխնիկայի շրջանակներում անհրաժեշտ հրահանգը ներկայացվում է որպես նախնական գործողություն կամ որևէ այլ, պակաս կարևոր և գիտակցական վերահսկողությանը ենթարկվող գործողության իրականացման համար նախապայման: Միևնույն ժամանակ, իրական հրահանգը դուրս է մնում գիտակցության քննադատությունից: Օրինակ, «Մինչև X-ին քվեարկելը, վերհիշեք նրա տված խոստումները»:

Հակադրությունների կիրառման տեխնիկայում օգտագործում են լսարանի հակադրությունը ներշնչանքին՝ արհեստականորեն ամրացնելով հիպնոտիկ հրահանգը լսարանի դիտարկվող վարքին: Այստեղ հարկավոր է հետևել արտահայտությունների որոշակի խիստ հաջորդականության պահպանմանը և դրանց համար նախատեսված քերականական ժամանակներին:

Օրինակ, «Որքան երկար եք լսում նշված գործչին, այնքան ավելի պարզ է դառնում, որ նա հետևողական է և խելացի»:

Լիարժեք ընտրության տեխնիկան ներկայացնում է ընտրության բոլոր հնարավոր տարբերակները, սակայն մանիպուլյատորի նպատակների համար շահեկան տեսանկյունից: Եթե ընտրության խաբկանքի հնարքի դեպքում ընտրության տարբերակները տեքստերում արհեստականորեն սահմանափակվում էին, ապա այստեղ ներկայացվում են անհատի վարքի բոլոր հնարավոր տարբերակները, այն առանձնահատկությամբ, որ լսարանի շահավետ և անշահավետ վարքը ներկայացվում է մանիպուլյատորի համար որպես միևնույն օգտակարություն ունեցող: Օրինակ, «Դուք կարող եք գնալ ընտրությունների և քվեարկել կամ, իհարկե, կարող եք մնալ տանը և կորցնել ձեր ձայնի իրավունքը»:

Այսպիսով, ՋԼՄ-ի կողմից կիրառվող ազդեցության ձևերն ու հնարքները բազմազան են և կարող են օգտագործվել ինչպես առանձին-առանձին, այնպես էլ տարբեր համադրություններով: Այնուհանդերձ, տեղեկատվության կառավարման մասնագետը պետք է ոչ միայն դրանք տեղին և արդյունավետ կիրառելու բավականաչափ հմտություններ ունենա, այլ նաև կարողանա դրանց հակազդելու եղանակներ մշակել:

«ՕՎԵՐԹՈՆԻ ՊԱՏՈՒՀԱՆԸ»

Գազիկ Տերտերով

ԶԼՄ-ում կիրառվող կանոնները և միջոցները համալիր օգտագործման պարագայում թույլ են տալիս կյանքի կոչել ցանկացած գաղափար, նույնիսկ այն ընդունել օրենսդրորեն: Մասնավորապես, հայտնի է Մաքկինակ (*Mackinac Center*) ՈւԿ աշխատակից Ջոզեֆ Օվերթոնի առաջարկած համոզման մեթոդը, որը ստացել է «Օվերթոնի պատուհան» անվանումը¹: Ըստ Օվերթոնի՝ հասարակությունում յուրաքանչյուր գաղափարի կամ խնդրի համար գոյություն ունի այսպես կոչված «հնարավորությունների պատուհան»: Այդ «պատուհանի» սահմաններում, օրինակ, ինչ-որ գաղափար հնարավոր չէ քննարկել կամ առավել ևս բացահայտ սատարել: «Տեղաշարժելով» այդ «պատուհանը»՝ կարելի է այնպես փոխել «հնարավորությունների հովիտը», որ նախկինում հանրության կողմից կտրականապես չընդունվող գաղափարը, հետևողական և քողարկված տեղեկատվական գործողությունների արդյունքում, մտնի «ակտուալ քաղաքականության» օրակարգ: Իսկ երբ հասարակությունը դա սկսում է ընկալել որպես կարևոր խնդիր, այդ գաղափարին կարելի է տալ նաև օրենքի տեսք: Ինչպես տեսնում ենք, դա ոչ թե փոքր-ինչ պարզունակ «ուղեղների լվացում» է, այլ ավելի նուրբ տեխնոլոգիա:

«Օվերթոնի պատուհանի» արդյունավետ գործելու օրինակ կարող է հանդիսանալ միասեռական հարաբերությունների օրենսդրական ամրապնդումը, մասնավորապես, ԱՄՆ-ում և ԵՄ-ում: Միասեռականների նկատմամբ նախկինում բացասական մոտեցում ունեք քրիստոնեական եկեղեցին: Սակայն հասարակություններում այդ խնդրին առանձնապես մեծ ուշադրություն չէր դարձվում՝ համարելով դա մարզինալների² բնո-

^{*} Փորձագետ:

¹ <http://www.mackinac.org/overtonwindow>

² *Մարզինալ* (լատ. *margo* - ծայր, սահման) - ծայրամասում գտնվող, աննկատելի, անցումային վիճակում գտնվող:

րոշ վարքագիծ, ո՛չ ավելին: Սակայն սկիզբ առան տեղեկատվական հետևողական և սաստկացող գործողություններ, որոնցում շատ էին գիտական հիմնավորումները և համապատասխան բովանդակություն ունեցող գեղարվեստական գրականությունը և կինոնկարները: Հատուկ շեշտադրվում էր այն հանգամանքը, որ տոտալիտար Երրորդ ռեյխում և ԽՍՀՄ-ում միասեռականների նկատմամբ դրսևորվում էր անհանդուրժողականություն, նրանք հալածվում էին: Արդյունքում՝ միասեռականների խնդիրը հասարակությունում ակտուալացվեց, լեզվացվեց և տեղափոխվեց մարդու իրավունքների հարթություն: Մնացածը, ինչպես ասում են, արդեն տեխնիկայի խնդիր էր. այսօր սովորական երևույթ են այն հեռուստակադրերը, երբ եկեղեցիներում կատարվում են ամուսնություններ տղամարդկանց (կամ կանանց) միջև: Ավելին, մարզինալ են ընկալվում նրանք, ովքեր չեն ընդունում նման մոտեցումները: Գրեթե նույն մեխանիզմով ընթացավ նաև «թեթև թմրանյութերի» օրինականացումը, որոնք այսօր մի շարք երկրներում ազատ վաճառքում են և նույնպես դիտարկվում են մարդու իրավունքների համատեքստում:

Համաձայն փորձագիտական գնահատականների, և՛ համասեռամոլության, և՛ թմրանյութերի լեզվացման խնդրում կարևոր դերակատարում ունեն խոշոր անդրազգային կոմերցիալ կառույցները: Թմրանյութերի վաճառքի և սեռական ծառայությունների շրջանառությունն այսօր հասնում է տրիլիոնավոր դոլարների, իսկ թմրանյութերի և համասեռամոլության տարածումը լայնացնում է համապատասխան բիզնես կառույցների շուկան, մեծացնում նրանց շահույթը: Միննույն ժամանակ, այս ոլորտների զարգացումը կրում է նաև գաղափարախոսական երանգ, քանի որ արդի գերազատականացված հասարակություններում, որոնք որակում են անգամ որպես «տոտալիտար ազատական հասարակություններ», սպառողական նոր հնարավորությունների ձևավորումը նպաստում է այդ հասարակությունների ավելի նպատակաուղղված կառավարմանը:

Ինչպես տեսնում ենք, ՋԼՄ-ի կողմից կիրառվող ազդեցության ձևերն ու հնարքները բազմազան են և կարող են օգտագործվել ինչպես առանձին-առանձին, այնպես էլ տարբեր համադրություններով, ինչն

Էապես սահմանափակում է լրատվության շարքային սպառողների կողմից ճշմարիտ, ընթացող իրողություններին համապատասխան տեղեկատվություն ստանալու հնարավորությունը: Այս համատեքստում տրամաբանական է, որ ստեղծվել են հատուկ մեթոդներ, որոնք օգնում են տարբեր ոլորտների վերլուծաբաններին «վերծանել» ՁԼՄ տրամադրած տեղեկատվությունը և այդպիսով ադեկվատ պատկերացումներ կազմել իրականության վերաբերյալ: Նման մեթոդներից է, մասնավորապես, «կոնտենտ վերլուծությունը»:

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը (*CV*):
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆԲ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 26.06.2017թ.

Թիվ 5 (84), 2017թ.

Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում